ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 02/19

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԵՎ ԱՅԼ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՍՏԵՂԾՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ, ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Բյուրեղավան 7 մարտի 2019թ.

2019 թվականի մարտի 7-ին, ժամը 15:00-ին, Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան բնակավայրում՝ Բյուրեղավանի համայնքապետարանի թիվ 1 վարչական շենքում, տեղի ունեցավ համայնքի ավագանու որոշումների նախագծերի և այլ առաջարկությունների նախնական քննարկման նպատակով ստեղծված ֆինանսական, բյուջետային և տնտեսական հարցերի մշտական գործող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստ:

Նիստին մասնակցում էին Հանձնաժողովի նախագահ Արման Օհանյանը, անդամներ Արման Խանզադյանը, Արտյոմ Ավագյանը, համայնքապետարանի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի պետ Լիդիա Պողոսյանը, նույն բաժնի առաջատար մասնագետ Շուշիկ Ասատրյանը, համայնքի ղեկավարի խորհրդական, զարգացման պատասխանատու Սարգիս Ղազարյանը, աշխատակազմի քարտուղար Լիլիթ Ավուշյանը, Հանձնաժողովի աշխատանքներին աջակցող համայնքապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետ Ջարուհի Ապրեսյանը:

Հանձնաժողովի նախագահը ներկայացրեց նիստի օրակարգը՝

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 27-ի N 71-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու և պահուստային ֆոնդից գումար հատկացնելու մասին,
2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի 2018 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին,
3. 2018 թվականին Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի հնգամյա զարգացման ծրագրի հաշվետվությունը հաստատելու մասին,
4. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի 2018 թվականի տարեկան աշխատանքային պլանի իրականացման տարեկան հաշվետվության մասին,
5. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ ստանալու նպատակով ««Անդրանիկ Պետրոսյանի անվան Բյուրեղավանի քաղաքային պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության սանհանգույցների և թվայնացված հետազոտման սենյակի վերանորոգման աշխատանքներ» ծրագիրը հաստատելու մասին,

6. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ ստանալու նպատակով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի «Ներհամայնքային ճանապարհների հիմնանորոգում» ծրագիրը հաստատելու մասին,
7. «Անդրանիկ Պետրոսյանի անվան Բյուրեղավանի քաղաքային պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության 2019 թվականի ֆինանսական գործունեության նախահաշիվը հաստատելու մասին,
8. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 27-ի N 70-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին,
9. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 27-ի N 69-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին,
10. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին,
11. Բյուրեղավանի համայնքային «Բարեկարգում և կանաչապատում» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը անհատույց և անժամկետ օգտագործման իրավունքով գույք ամրացնելու մասին:

համայնքի ավագանու որոշումների նախագծերի թեմաներով:

Լ. Պողոսյանը առաջին հարցի շուրջ ներկայացրեց, որ նախագիծը մշակվել է «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և 90-րդ հոդվածի, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի և 29-րդ հոդված համաձայն: Նախագիծը մշակելիս հաշվի է առնվել Կոտայքի մարզպետի և Բյուրեղավան համայնքի ղեկավարի համատեղ քննարկումը՝ Բյուրեղավան համայնքում կապիտալ ծրագրերի առաջնահերթ լուծում պահանջող հիմնախնդիրների լուծման ուղղությամբ իրականացվելիք աշխատանքների վերաբերյալ: Առաջարկվում է ավելացնել համայնքի 2019 թվականի բյուջեում նախատեսված ասֆալտապատման աշխատանքների ծավալները, ուստի անհրաժեշտություն է առաջացել Բյուրեղավան համայնքի 2019 թվականի բյուջեով նախատեսված վարչական մասի պահուստային ֆոնդից հատկացնել 10.000.000 (տասը միլիոն) դրամ՝ «Ճանապարհային տնտեսություն» (բաժին 04, խումբ 5, դաս 1) նախահաշվի «5113» հոդվածին:

Համայնքի բնակչության շրջանում թափառող կենդանիների կողմից տուժելու դեպքերը կանխարգելելու համար անհրաժեշտ է կազմակերպել և իրականացնել թափառող կենդանիների դեմ պայքարի միջոցառումներ: Անհրաժեշտություն է առաջացել Բյուրեղավան համայնքի 2019 թվականի բյուջեով նախատեսված վարչական մասի պահուստային ֆոնդից հատկացնել 1.000.000 (մեկ միլիոն) դրամ՝ «Շրջակա միջավայրի պաշտպանություն» (բաժին 05, խումբ 6, դաս 1) նախահաշվի «4213» հոդվածին:

Որոշվեց՝

հավանություն տալ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 27-ի N 71-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին որոշման նախագծին և ներկայացնել ավագանու նիստին:

Կողմ- 3 Դեմ- 0

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի 2018 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվության վերաբերյալ Լ. Պողոսյանը ներկայացրեց, որ խոշորացված Բյուրեղավան համայնքի, որի կազմում են երեք բնակավայրեր՝ Բյուրեղավան քաղաքը, Նուռնուս և Ջրաբեր գյուղերը, 2018 թվականի համայնքի վարչական բյուջեի համախմբված եկամուտները ծրագրով նախատեսված 283400,7 հազար դրամի, որից Բյուրեղավան՝ 267624,1 հազար դրամ, Նուռնուս՝ 6931,0 հազար դրամ, Ջրաբեր՝ 8845.6 հազար դրամ, տարեկան ճշտված ծրագիրը 282771,4 հազար դրամի դիմաց փաստացի եկամուտը կազմել է 278086,2 հազար դրամ, որից Բյուրեղավան՝ 264986.2 հազար դրամ, Նուռնուս՝ 5655,2 հազար դրամ, Ջրաբեր՝ 7444,8 հազար դրամ՝ արձանագրելով տարեկան ծրագրային ցուցանիշի 1,7 % թերակատարում, որը կազմում է 4685.2 հազար դրամ: Հաշվետու տարում հավաքագրած վարչական բյուջեի եկամուտների 32.5 %-ը ապահովվել է սեփական եկամուտների հաշվին, իսկ 67.5 %-ը՝ պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաների և նպատակային հատկացումների (սուբվենցիաներ) հաշվին: 2018 թվականին համայնքի բյուջեի միջոցների հաշվին ծախսերի ֆինանսավորմանն է հատկացվել է 340927,5 հազար դրամ՝ ապահովելով տարեկան ծրագրի 88,0 %-ի կատարում: Հաշվետու տարում ընթացիկ ծախսերի ֆինանսավորմանը հատկացվել է 233572,1 հազար դրամ, կատարվելով 89,8 %-ով, որը կազմում է ամբողջ ծախսերի 68,5 %-ը: Հաշվետու տարում համայնքային բյուջեի ծախսերի 31,5 %-ը կամ 107355.6 հազար դրամը ուղղվել է ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի ֆինանսավորմանը:

Որոշվեց՝

հավանություն տալ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 27-ի N 71-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին որոշման նախագծին և ներկայացնել ավագանու նիստին:

Կողմ- 3 Դեմ- 0

Ս. Ղազարյանը ներկայացրեց, որ «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 82-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ բյուջեի կատարման տարեկան հաշվետվության հետ համայնքի ղեկավարը համայնքի ավագանուն է ներկայացնում հաշվետու տարում հնգամյա զարգացման ծրագրի իրականացման վերաբերյալ հաշվետվություն, որը ենթակա է հրապարակման:

ՀՀ Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի 2018-2022թթ. հնգամյա զարգացման ծրագրի ներքին մոնիթորինգն իրականացվել է Բյուրեղավան համայնքի ղեկավարին կից համայնքի զարգացման

հնգամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման խորհրդակցական մարմնի կողմից՝ ըստ ոլորտային ծրագրերի և միջոցառումների աշխատանքների կատարման ցուցանիշների:

Որոշվեց՝

հավանություն տալ 2018 թվականին Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի հնգամյա զարգացման ծրագրի հաշվետվությունը հաստատելու մասին որոշման նախագծին և ներկայացնել ավագանու նիստին:

Կողմ- 3 Դեմ- 0

Տարեկան աշխատանքային պլանի (այսուհետ՝ ՏԱՊ) հաշվետվությունը ևս մշակվել է համայնքի ղեկավարին կից գործող ԽՄ-ի կողմից: Հաշվետվությունը հասցեագրված է Բյուրեղավան բազմաբնակավայր համայնքի ՏԻՄ-երին, համայնքապետարանի աշխատակազմին, համայնքային կազմակերպություններին, բնակիչներին, քաղաքացիական հասարակությանը, մասնավոր հատվածի կազմակերպություններին ու խմբերին, ինչպես նաև շահագրգիռ այլ անձանց:

Համայնքի ՏԱՊ-ի մոնիթորինգի պլանի կատարումը դիտարկելիս կարելի է տեսնել, որ համայնքի 2018 թվականի ՏԱՊ-ով սահմանված ծրագրերը 2018 թվականի ընթացքում իրականացվել են: Համայնքում ծրագրերի իրականացման համար նախատեսված միջոցները ծախսվել են սահմանված նպատակներին համապատասխան, որոշ դեպքերում առկա են տնտեսումներ: Կան ծրագրեր, որոնց իրականացումը անհնար է եղել ժամանակի սղության պատճառով:

Որոշվեց՝

հավանություն տալ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի 2018 թվականի տարեկան աշխատանքային պլանի իրականացման տարեկան հաշվետվության մասին որոշման նախագծին և ներկայացնել ավագանու նիստին:

Կողմ- 3 Դեմ- 0

Սուբվենցիաներ ստանալու նպատակով կազմված ծրագրային հայտերի՝ ««Անդրանիկ Պետրոսյանի անվան Բյուրեղավանի քաղաքային պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության սանհանգույցների և թվայնացված հետազոտման սենյակի վերանորոգման աշխատանքներ» և «Ներհամայնքային ճանապարհների հիմնանորոգում» ծրագրերի վերաբերյալ Ս. Ղազարյանը հայտնեց, որ հայտերը բխում են «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի դրույթներից և համայնքի հնգամյա զարգացման ծրագրի ռազմավարությունից:

«Անդրանիկ Պետրոսյանի անվան Բյուրեղավանի քաղաքային պոլիկլինիկա» ՓԲԸ-ն չունի թվայնացված հետազոտման սենյակ, ինչի բացակայությունը հնարավորություն չի տալիս հիվանդներին տեղում և արագ մատուցել բժշկական որակյալ ծառայություն: Սենյակի կառուցումը պոլիկլինիկային հնարավորություն կտա տնտեսել ֆինանսական միջոցներ, մատուցել լրացուցիչ վճարովի ծառայություններ: Պոլիկլինիկայի կողմից մատուցվող ծառայություններից օգտվում են Բյուրեղավան, Նուռնուս, Արզնի բնակավայրերի բնակիչները: Թվայնացված հետազոտման սենյակի վերանորոգումը,

դպա կահավորումը հնարավորություն կտան տեղում իրականացնելու ռենտգենաբանական հետազոտություններ, ինչը կբարձրացնի բնակչությանը մատուցվող առողջապահական ծառայության որակը:

Որոշվեց՝

հավանություն տալ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ ստանալու նպատակով ««Անդրանիկ Պետրոսյանի անվան Բյուրեղավանի քաղաքային պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության սանհանգույցների և թվայնացված հետազոտման սենյակի վերանորոգման աշխատանքներ» ծրագիրը հաստատելու մասին որոշման նախագծին և ներկայացնել ավագանու նիստին:

Կողմ- 3 Դեմ- 0

Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան, Նուռնուս և Ջրաբեր բնակավայրերի ճանապարհների վնասվածության պատճառով տրանսպորտային միջոցների երթևեկությունը դառնում է անհարմար: Այդ խնդրի լուծման համար անհրաժեշտ է իրականացնել ճանապարհների և մայթերի հիմնանորոգման, բարեկարգման և կառուցման աշխատանքներ՝ ապահովելով հետիոտնի հարմարավետ տեղաշարժը և տրանսպորտային միջոցների երթևեկությունը, ինչպես նաև համայնքը կլինի ավելի գրավիչ ներդրողների համար և կապահովի բարեկեցիկ միջավայր:

Որոշվեց՝

հավանություն տալ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ ստանալու նպատակով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի «Ներհամայնքային ճանապարհների հիմնանորոգում» ծրագիրը հաստատելու մասին որոշման նախագծին և ներկայացնել ավագանու նիստին:

Կողմ- 3 Դեմ- 0

«Անդրանիկ Պետրոսյանի անվան Բյուրեղավանի քաղաքային պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության 2019 թվականի ֆինանսական գործունեության նախահաշիվը հաստատվում է համայնքի ավագանու կողմից՝ համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 83-րդ հոդվածի 1-ին մասի, 84-րդ հոդվածի 1-ին մասի «իգ» կետի:

Որոշվեց՝

հավանություն տալ «Անդրանիկ Պետրոսյանի անվան Բյուրեղավանի քաղաքային պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության 2019 թվականի ֆինանսական գործունեության նախահաշիվը հաստատելու մասին որոշման նախագծին և ներկայացնել ավագանու նիստին:

Կողմ- 3 Դեմ- 0

Լիլիթ Ավուշյանը ներկայացրեց, որ ՀՀ առողջապահության նախարարի 2014 թվականի հուլիսի 24-ի N 1791-Ա՝ «Պետության կողմից երաշխավորված անվճար արտահիվանդանոցային բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող աշխատողների աշխատանքի վարձատրման մասին» հրամանում փոփոխություններ են կատարվել (2019 թվականի փետրվարի 04-ի N 259-Ա հրաման), որի համաձայն անհրաժեշտություն է առաջացել փոփոխություններ կատարել Բյուրեղավան համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 27-ի N 70-Ա որոշման N 5 հավելվածով հաստատված «Անդրանիկ Պետրոսյանի անվան Բյուրեղավանի քաղաքային պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության 2019 թվականի հաստիքացուցակում և պաշտոնային դրույքաչափերում: Ինչպես նաև մինչև 10 % - ի չափով բարձրացել է վարչատնտեսական անձնակազմի աշխատավարձը:

Որոշվեց՝

հավանություն տալ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 27-ի N 70-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին որոշման նախագծին և ներկայացնել ավագանու նիստին:

Կողմ- 3 Դեմ- 0

Բյուրեղավան համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավանի համայնքապետարանի աշխատակազմի 2019 թվականի կառուցվածքը, աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» N 69-Ա որոշման մեջ, ըստ Լ. Ավուշյանի, փոփոխություն կատարելու անհրաժեշտությունը պայմանավորված է համայնքի ֆինանսական ռեսուրսները խնայելու և համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկը ավելի արդյունավետ դարձնելու նպատակով:

Որոշվեց՝

հավանություն տալ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 27-ի N 69-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին մասին որոշման նախագծին և ներկայացնել ավագանու նիստին:

Կողմ- 3 Դեմ- 0

Համայնքապետարանի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի առաջատար մասնագետ Շ. Ասատրյանը հայտնեց, որ «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 32-րդ կետի համաձայն՝ համայնքի սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերը հաստատվում են համայնքի ավագանու կողմից:

Որոշվեց՝

հավանություն տալ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին որոշման նախագծին և ներկայացնել ավագանու նիստին:

Կողմ- 3 Դեմ- 0

Բյուրեղավանի համայնքային «Բարեկարգում և կանաչապատում» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը անհատույց և անժամկետ օգտագործման իրավունքով համայնքային սեփականություն հանդիսացող գույքը՝ 1 հատ Մերսեդես – Բենց E 240 մակնիշի մարդատար ավտոմեքենա, ամրացնելու առաջարկը արվում է՝ համայնքի գույքը առավել նպատակային և արդյունավետ օգտագործելու նպատակով:

Որոշվեց՝

հավանություն տալ Բյուրեղավանի համայնքային «Բարեկարգում և կանաչապատում» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը անհատույց և անժամկետ օգտագործման իրավունքով գույք ամրացնելու մասին որոշման նախագծին և ներկայացնել ավագանու նիստին:

Կողմ- 3 Դեմ- 0

Նիստն ավարտվեց:

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Արման Օհանյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Արման Խանզադյան

_____ Արտյոմ Ավագյան